

LIFE – «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով» ծրագրի

ՏԵՂԵԿԱԳԻՐ

#9 - ապրիլ 2014



USAID
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻՑ



Save the Children

LIFE ծրագիրը (2012-2015) իրականացնում է «Մեյվ դը չիլդրեն» կազմակերպությունը՝ ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ:

Ծրագրի գործընկերներն են «Ակտիվա» միջազգային հիմնադրամը, «Ունիսոն», «Էյջ-Դի-Փի հիմնադրամ» և «Լիարժեք կյանք» ՀԿ-ները:

Ծրագիրը սերտորեն համագործակցում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության և զբաղվածության կենտրոնների, հաշմանդամություն ունեցող անձանց և ՀԿ-ների, մարզային իշխանությունների և տեղական ինքնակառավարման մարմինների, ծառայություններ մատուցողների, միջին մասնագիտական կրթական հաստատությունների և գործատուների հետ:

Այս համարում կարդացեք՝

- «Հաշմանդամություն ունեցող անձանց մասնագիտական կրթության եվ ուսուցման հիմնախնդիրները» կլոր սեղան քննարկում
- «Հաշմանդամություն ունեցողները պարտաճանաչ աշխատողներ են». «Էյփրիքթ» ընկերությունը՝ աշխատանքային թերապիայի հաջողված օրինակ
- «Կյանք առանց սահմանների» հաշմանդամության ոլորտին վերաբերող միջոցառումների շարք
- «Իրազեկվիր, վերապատրաստվիր և գտիր աշխատանք». նոր սոցիալական հոլովակ հաշմանդամների զբաղվածությունը խթանող պետական ծրագրերի վերաբերյալ
- Օրենսդրական «բարե»փոփոխումներ զբաղվածության ոլորտում, վերլուծական նյութ
- «Գնահատե՛նք հաշմանդամություն ունեցող անձանց կարողությունները». Հակոբի և Հենրիետայի պատմությունը



«ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ»
ԿԼՈՐ ՍԵՂԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ



2013թ. հունիսից «Սեյվ դը չիլդրենը» LIFE ծրագրի շրջանակներում աջակցում է հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների, ՀԿ-ների և նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների 14 ծրագրերի իրականացմանը՝ նպաստելու հաշմանդամություն ունեցող անձանց (ՀՈՒԱ) համար ուսումնական/աշխատանքային միջավայրի բարելավմանը, շուկայական պահանջարկ ունեցող նոր կրթական ծրագրերի մշակմանը, մասնագիտական կրթության դասընթացների անցկացմանը, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց ինտեգրմանը նպաստող ներառական միջավայրի ստեղծմանը:

Այդ ծրագրերի իրականացման ընթացքում գրանցված հաջողությունները, դժվարությունները, քաղած դասերը և հետագա գործունեությունը ներկայացնելու նպատակով ս.թ. փետրվարի 14-ին կազմակերպվել էր կլոր սեղան քննարկում՝ ԱՄՆ ՄԶԳ-ի, «Սեյվ դը

չիլդրենի», 14 դրամաշնորհառու կազմակերպությունների, ինչպես նաև LIFE ծրագրի գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ:

Հանդիպման ընթացքում ներկայացված տվյալների համաձայն՝ գիշերօթիկ և հատուկ դպրոցների 273 սան մասնակցել է LIFE ծրագրի կողմից կազմակերպված մասնագիտական կողմնորոշման միջոցառումներին, 154 երիտասարդ կշարունակեն իրենց կրթությունը միջին մասնագիտական/արհեստակցական կրթական հաստատություններում երկարաժամկետ ուսուցման ծրագրերով և 447 ՀՈՒԱ արդեն ձեռք են բերել մասնագիտություն միջին մասնագիտական և արհեստագործական կրթական հաստատություններում՝ ընդգրկված լինելով

կարճաժամկետ դասընթացներում: Միջին մասնագիտական և արհեստագործական 44 կրթական հաստատությունների 1306 դասախոս զարգացրեցին հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատելու իրենց կարողությունները:

Հանդիպման մասնակիցներն անդրադարձան նաև հաշմանդամություն ունեցող անձանց՝ մասնագիտական կրթության ոլորտ ընդգրկվելու հետ կապված առկա խնդիրներին: Ըստ պաշտոնական տվյալների, 1990-ական թթ. վերջերից ՀՀ նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում յուրաքանչյուր տարի ընդունվել և սովորել են հաշմանդամություն ունեցող մինչև 50 անձինք: 2013-2014 ուսումնական տարում «Մեյվ դը չիլդրեն» կազմակերպության կողմից իրականացվող աշխատանքների արդյունքում ավելի քան երկու անգամ աճել է արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ ընդունվող հաշմանդամություն ունեցող անձանց քանակը (շուրջ 130 անձ): Այսուհանդերձ, այդպիսի ընդգրկվածությունը (ընդհանուր քանակի 0.07 %-ը) դեռևս չի նպաստում այդ խմբի սոցիալական ինտեգրմանը, կենսամակարդակի բարելավմանը, վերընթաց սոցիալական շարժունակությանը և ավելի բարձր սոցիալ-տնտեսական դիրքի ապահովմանը:

Այնուամենայնիվ, հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում աստիճանաբար մեծանում է այն գիտակցումը, որ լավ կրթությունն առանցքային գործոն է աշխատանք գտնելու և իրենց սոցիալ-տնտեսական դրությունը բարելավելու համար: Այդ գործընթացի իրականացման համար հաշմանդամություն ունեցող անձինք կարևորում են հատկապես տեղական աշխատաշուկայի կարիքներից բխող արհեստագործական և միջին մասնագիտական կրթությունը:

Քննարկումների, հետազոտական աշխատանքի, ինչպես նաև LIFE ծրագրի շրջանակներում ձեռք բերված փորձի հիման վրա նախատեսվում է մշակել հաշմանդամություն ունեցող անձանց բնականոն մասնագիտական ուսուցումը կազմակերպելու և իրականացնելու քաղաքականության վարման առաջարկությունների փաթեթ և ներկայացնել ՀՀ Կառավարություն:

«ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂՆԵՐԸ ՊԱՐՏԱՃԱՆԱԶ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ ԵՆ».
«ԷՅՓՐԻՔՈԹ» ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԹԵՐԱՊԻԱՅԻ ՀԱԶՈՂՎԱԾ ՕՐԻՆԱԿ

31-ամյա Գրիգորն ապրում է Վանաձոր քաղաքում: Նա, ինչպես հաշմանդամություն ունեցող անձանց մեծ մասը, ստիպված է դիմակայել բազմաթիվ խնդիրների՝ կապված տեղաշարժման, ուսման, աշխատանքի տեղավորման, հասարակության կողմից խտրական վերաբերմունքի հետ և այլն:

Վերջերս LIFE ծրագրի շնորհիվ Գրիգորը ներգրավվեց կավագործության դասընթացներում, որոնք անցկացվում են հուշանվերների արտադրությամբ զբաղվող «Էյփրիքոթ» ընկերությունում:

«Երբ ինձ առաջարկեցին այստեղ սովորել՝ հետագայում նաև աշխատանքի ընդունելու և տրանսպորտային ծախսերը հոգալու պայմանով, միանգամից համաձայնվեցի: Աշխատանքն ինձ համար առաջին հերթին ցրվելու միջոց է, ինձ այստեղ լավ են վերաբերվում: Արդեն հասցրել եմ գիպսե տարուսիկներ պատրաստել, նաև՝ կավե խաչ: Սիրում եմ այն, ինչ անում եմ: Այստեղ ամեն ինչ հարմար է ինձ»:

«Էյփրիքոթ» ընկերության հիմնադիր տնօրեն Տիգրան Հովհաննիսյանի խոսքերով՝ իրենց փոքրիկ ընկերությունն առանձնանում է նրանով, որ այստեղ աշխատում են հաշմանդամություն ունեցող անձինք, մեծամասամբ՝ երիտասարդներ: «Հաշմանդամություն ունեցող անձանց հետ շատ ավելի հեշտ է աշխատել, չեն շտապում, գլուխ չեն պահում, պատրաստ են ծանրաբեռնվածության: Շատ պարտաճանաչ են: Մա աշխատանքային թերապիա է նրանց համար, առաջին հերթին՝ հասարակական կյանք մտնելու և ինքնադրսևորվելու միջոց»:



Ըստ Զբաղվածության Վանաձորի մարզային կենտրոնի տնօրեն Արա Առաքելյանի՝ կենտրոնն է ուղղորդել այս երիտասարդներին դեպի «Էյփրիքոթ» ընկերություն՝ փորձելով այս կերպ ավելի ակտիվացնել հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածությանն ուղղված պետական ծրագրերը: Կենտրոնի տնօրենը, սակայն, որոշակի մտահոգություններ ունի այս առումով. «Մինչ օրս, դեռ չեն հաստատվել զբաղվածության պետական ծրագրերի նոր կարգերը, համաձայն որոնց իրականացվելու է այս երիտասարդների՝ աշխատատանքի

տեղավորման գործընթացը: Միակը, որ առայժմ կարող է անել կենտրոնը, հաշմանդամություն ունեցող երիտասարդների համար մասնագիտական ուսուցում կազմակերպելն է:

«Էյփրիքոթ» ընկերության հիմնադիրներից Գևորգ Քոթանջյանը նշում է. «Այսօր ունենք 11 աշխատող, եթե ունենանք պետական աջակցություն, այսինքն՝ պետական կառույցները դառնան մեր պատվիրատուները՝ մի քիչ թեթևացնելով տեղում իրացման խնդիրը, ինչպես նաև նպաստավոր բիզնես դաշտ լինի, այդ թիվը կհասնի մինչև 50-ի»:

Բացի փայտե և գիպսե հուշանվերներից, էյփրիքոթցիները ցանկություն ունեն գործարկելու նաև կավի, գորգագործության, հելունագործության արտադրամասեր:

ԿՅԱՆՔ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ

Ամերիկայի Միացյալ Նահանգներում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները պաշտպանվում են ոչ թե թղթի վրա, այլ իրական կյանքում, իսկ ներառական հասարակությունն արդեն վաղուց դարձել է կենսաձև: Ողջունելի է, որ ԱՄՆ-ն ոչ միայն կարևորում է իր երկրում տեղի ունեցող բարեփոխումները, այլև նպաստում է հայաստանյան հասարակության կողմից նմանատիպ մտածելակերպի ընդունմանը, բազմազանության դրական ընկալմանը, յուրաքանչյուր անձի հանդեպ հարգանքի դրսևորմանը:



Այսպես, Հայաստանում ԱՄՆ դեսպանատան աջակցությամբ փետրվարի 25-ից մեկնարկեց հաշմանդամության ոլորտին վերաբերող միջոցառումների շարքը: Բացումը կայացավ «Նորարարական փորձարարական արվեստի կենտրոնում»: Միջոցառումը, որը կրում էր «Կյանք առանց սահմանների» խորագիրը, իր մեջ միավորեց երկու հիմնական տարր՝ կերպարվեստի ժանրի աշխատանքների ցուցահանդես (ընդ որում հեղինակների մեջ ինչպես հաշմանդամություն ունեցող, այնպես էլ չունեցող անձինք էին) և փոքրիկ երգչախմբային համերգ, որին նախորդեց ԱՄՆ դեսպան Ջոն Հեֆերնի ողջույնի խոսքը.

- Ես անձամբ հուսով եմ և կցանկանայի, որ այս ցուցահանդեսը և դրան հաջորդող քննարկումներն ու մտորումներն օգնեն մեզ բոլորիս շարունակել այն ուղին, որն առաջնորդում է դեպի առավել ներառական, բազմազան, հետևաբար նաև՝ ամուր հասարակություն, որտեղ ոչ միայն գնահատում են հաշմանդամություն ունեցող անձանց ներդրումները, այլ նաև օգտագործում են նրանց եզակի ձիրքերը,- նշեց դեսպանը:

Ելույթ ունեցավ նաև պարաօլիմպիկ խաղերի բազմակի չեմպիոն Քեյբլ Քենդիսը, ով խոսեց ԱՄՆ-ում 1970-ական թվականներին հավասար հնարավորությունների համար իր և իր համախոհների կողմից մղած պայքարի և հաղթանակների մասին:

Ի՞նչ մշակութային միջոցառում՝ առնչվող հաշմանդամություն ունեցող, առանց «Ունիտոնի» մասնակցության: Ցուցահանդեսին ներկայացված գործերի մեծամասնությունը պատկանում էր «Ունիտոնի» կերպարվեստի ստուդիայի սաների վրձնին, իսկ միջոցառման համերգային մասում հնչեցին «Փարոս» կամերային երգչախմբի կատարումները (երգչախումբը գործում է «Ունիտոն» ՀԿ-ին կից):

Միջոցառման համակարգող Արփա Հակոբյանն այսպես ձևակերպեց նախագծի նպատակը.

- Նկատի ունենալով Հայաստանում հատուկ կարիք ունեցող մարդկանց մասամբ անտեսված լինելու փաստը, ցուցահանդեսը հասարակությանը հնարավորություն է տալիս շփվելու առանց նախապաշարմունքների: Արվեստի միջոցով հույս ունենք փոխանցել ամենակարևոր ուղերձը՝ կյանքն առանց սահմանների:

Հեղինակ՝ Մարիաննա Չալիկյան

ԻՐԱԶԵԿՎԻՐ, ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎԻՐ և ԳՏԻՐ ԱՇԽԱՏԱՆՔ

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՏԱԼԻՍ ԳՈՐԾԱՏՈՒԻՆ ԳՏՆԵԼ ԱՆՀՐԱՎՅԵՇՏ ՄԱՍՆԱԳԵՏԻ, ԻՍԿ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՅՈՂ ԱՆՁԱՆՑ՝ ԱՇԽԱՏԱՆՔ



ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՅՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ



ԱՇԽԱՏԱԿԱՐԶԻ ՄԱՍՆԱԿԻ ՓՈՆԵՀԱՏՈՒՅՈՒՄ ԳՈՐԾԱՏՈՒԻՆ



ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄ

LIFE ծրագրի շրջանակներում անցկացված բազմաթիվ հարցումներն ու դասընթացները ցույց տվեցին, որ հաշմանդամների զբաղվածությունը խթանող պետական ծրագրերի վերաբերյալ հանրության իրազեկվածությունը բավականին ցածր է: Այդ իսկ պատճառով LIFE ծրագրի շրջանակներում նկարահանվեց մի նոր սոցիալական տեսահոլովակ՝ նվիրված հենց այս ծրագրերի լուսաբանմանը:

Տեսահոլովակում գլխավոր դերակատարները հենց իրենք՝ հաշմանդամություն ունեցող անձինք են՝ նկարահանված իրենց իրական աշխատավայրերում:

Վերապատրաստում և պրակտիկա, աշխատավարձի փոխհատուցում և աշխատատեղի հարմարեցում՝ ահա այն ծրագրերը, որոնք օգնել են նրանց աշխատանքի տեղավորվել և որոնք կաջակցեն նաև այլ հաշմանամներին գտնել իրենց տեղը աշխատաշուկայում և կյանքում:

Դիտեք տեսահոլովակն այստեղ. <http://life-disability.am/Docs/PSA/PWD%20Employment.VOB>



ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ «ԲԱՐԵ»ՓՈԽՈՒՄՆԵՐ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

LIFE ծրագրի շրջանակներում՝ անցած 2 տարիների ընթացքում իրականացրած գործողությունները զգալիորեն նպաստեցին Հայաստանում հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության հարցի առաջխաղացմանը: Լուծման եղանակներ տրվեցին ուսումնական բացերին, աշխատատեղերի ստեղծման, իրազեկման և բազմաթիվ այլ խնդիրներին: Եվ, կարծես թե, ամեն ինչ գնում էր իր բարենպաստ հունով, անգամ ստեղծվեց լրացուցիչ խթանող հանգամանք՝ օրենսդրորեն ամրագրվեց հաշմանդամների համար աշխատանքային քվոտավորման մեխանիզմը, սակայն... 2014 թվականի հունվարից անսպասելիորեն կասեցվեցին հաշմանդամներին վերաբերող «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության բոլոր հաջողված ծրագրերը՝ աշխատավարձի մասնակի փոխհատուցում, աշխատատեղի հարմարեցում, մասնագիտական վերապատրաստում: Սրանք հենց այն ծրագրերն են, որոնց մասին LIFE-ը անընդմեջ իրազեկում էր բոլոր հնարավոր միջոցներով:

Պատճառը 2013թ. ընդունված «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքում հաշմանդամների անմրցունակության սահմանման փոփոխությունն է: Եթե մինչև օրենքի ընդունումը, հաշմանդամության առկայության պարագայում, անձն ինքստինքյան համարվում էր անմրցունակ և կարող էր օգտվել վերոնշյալ ծրագրերից, ապա օրենքի ընդունումից հետո այդ կարգավիճակը տրամադրվելու է այլ չափանիշներից ելնելով: «Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող մի շարք իրավական ակտեր հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերում այդ չափորոշիչներն արդեն նշված են: Այսպես, միայն 1-ին խմբի հաշմանդամությունն է տալիս միանշանակ անմրցունակության կարգավիճակ: Իսկ 2-րդ և 3-րդ խմբերի պարագայում հաշմանդամության գործոնը պետք է գուցորդվի անմրցունակության կարգավիճակ ապահովող մեկ այլ գործոնի հետ: Օրինակ «անձն ունի 2-րդ կամ 3-րդ խմբի հաշմանդամություն կամ «հաշմանդամ երեխա» կարգավիճակ և հանդիսանում է թրաֆիքինգի զոհ», և նման այլ գուցորդումներ: Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կայքում տեղադրված վերոնշյալ նախագծերի թվում նաև անդրադարձ կա աշխատավարձի մասնակի փոխհատուցման ծրագրին: Այստեղ կրկին տեղի է ունեցել փոփոխություն ի վնաս հաշմանդամների՝ փոխհատուցման ժամկետը նվազեցվել է 2 տարուց մինչև 6 ամիս: Եվ եթե նախկին փոխհատուցման գումարները առանձնապես չէին խրախուսում միայն խոշոր գործատուներին, ապա ներկայիս դրությամբ փոխհատուցման ծրագիրը հավանաբար չի հետաքրքրի նաև միջին և մանր ձեռնարկություններին:

Աշխատավարձի փոխհատուցմանը վերաբերող նախագծում կա նաև դրական նորամուծություն՝ արդեն հստակեցված է հաշմանդամություն ունեցող անձին, ըստ անհրաժեշտության, ուղեկցողի տրամադրման կարգը: Ուղեկցողի ինստիտուտի ստեղծման գաղափարի առաջարկը բազմիցս հնչեցվել է «Ունիտոն» ՀԿ-ի կողմից: Սակայն տվյալ նախագծում նշված իրականացման մեխանիզմները գրեթե անիմաստ են դարձնում այդ նորամուծությունը՝

ուղեկցողի համար պետությունը տրամադրում է հաշմանդամություն ունեցող անձին գումար, բայց... ընդամենը 6 ամսյա ժամկետով և ընդամենը «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի 50 տոկոսի չափով: Հարց է ծագում արդյո՞ք նման գումարով կարելի է վարձել համապատասխան ասիստենտի, և կվերանա՞ արդյոք ուղեկցողի անհրաժեշտությունը 6 ամիս անց: Երկու հարցն էլ ենթադրում են նույն պատասխանը՝ քիչ հավանական է: Այս պարագայում ուղեկցողի համար տրամադրվող աջակցությունը ստանում է գուտ ձևական բնույթ: Իսկ ձևական քայլերով դժվար է հասնել իրական փոփոխությունների:

ԳՆԱՀԱՏԵՆՔ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ...



Դիպվածը նրանց ճիշտ էր հանդիպեցրել. կազմել էին երջանիկ ընտանիք, լույս աշխարհի բերել հրաշալի աղջնակ:

Քոլեջում «Հաշվապահ» դասընթացն ավարտելուց հետո ամուսինները համատեղ հիմնեցին սեփական զբոսաշրջության գրասենյակը, որտեղ հաշմանդամություն ունեցողների համար կազմակերպում են տարաբնույթ դասընթացներ, էքսկուրսիաներ, ձիավարություն:

Սա մարդկային երջանիկ պատմություն է, որը համոզում է՝ ոչ մի խնդիր չի կարող խոչընդոտել մարդուն՝ զգալու իրեն պահանջված, սիրված, գնահատված:

Այնպես, ինչպես այս երջանիկ գույգը, ավելի քան 80 հաշմանդամություն ունեցող անձինք կրթություն են ստանում Երևանի տարածաշրջանային թիվ 2 քոլեջում՝ LIFE ծրագրի միջոցով

Հակոբին և Հենրիետային Երևանի տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջում շատ լավ են ճանաչում: Մի քանի ամիս առաջ նրանք որպես ուսանող մտան քոլեջ, որտեղ շուրջ մեկ տարի է՝ անվճար ուսուցում է իրականացվում հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Կարճ ժամանակ անց Հակոբն ու Հենրիետան դարձան դասախոսների և ուսանողների բարեկամը՝ իրենք իրենց հերթին հնարավորինս օգնելով, աջակցելով բոլորին:

ստացված դրամաշնորհի շրջանակներում, ավելի քան 80 կյանքի պատմություն է կերտվում քուլեջի ջերմ պատերի ներսում:

Ժամանակն է գիտակցել, որ հաշմանդամությունը չպետք է հանդիսանա անլուծելի խնդիր, և հաշմանդամությունն ունեցող անձինք կարող են և պետք է իրենց ներդրումն ունենան հասարակական կյանքում: Պարզապես հարկավոր է հաշվի առնել նրանց կարիքները՝ օրինակ, փոքր-ինչ հարմարեցնելով պայմանները և մեծապես վերանայելով մեր մոտեցումներն ու մտածելակերպը...

Կյանքը գունեղ է՝ անսահման երազներով, անակնկալներով, իրական հրաշքներով: Այդպես կյանքը ծաղկում է այս երիտասարդների և բազում այլ անձանց համար, ովքեր շրջապատված են հոգացող, ըմբռնող և գնահատող մարդկանցով: Եկե՛ք, ուրեմն, գնահատենք հաշմանդամություն ունեցող անձանց կարողությունները...

LIFE ծրագրի մեկնարկից՝ 2012թ. հունվարից մինչ օրս

275

հաշմանդամություն ունեցող անձ
տեղավորվել է աշխատանքի

Ի գիտություն հետազոտողների, հասարակական և մասնավոր սեկտորի. ՏԵՂԵԿԱԳԻՐԸ հնարավորություն է տալիս լուսաբանել հաշմանդամության ունեցող անձանձ ուղղված ծրագրերը/հետազոտությունները: Հետաքրքրվածության դեպքում կարող եք դիմել LIFE ծրագրի օգնական Մարիա Գևորգյանին՝ Maria.Gevorgyan@savethechildren.org էլ. հասցեով:

LIFE ՏԵՂԵԿԱԳԻՐԸ պատրաստվում է ԱՄՆ ՄԶԳ Ֆինանսավորմամբ իրականացվող LIFE ծրագրի շրջանակներում: Տեղեկագրում արտահայտված տեսակետները հեղինակներին են և կարող են չարտացոլել ԱՄՆ ՄԶԳ-ի կամ «Մեյվ դը չիլդրենի» տեսակետները:



«Մեյվ դը չիլդրենը» երեխաների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ամենամեծ կազմակերպություններից է աշխարհում: Այն ներառում է 29 ազգային կազմակերպություններ, որոնք գործում են ավելի քան 120 երկրներում:

«Մեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլ»-ի հայաստանյան ներկայացուցչություն

Հայաստան, Երևան 0014, Ազատության պող. 27, 3-րդ հարկ
Հեռ.՝ (374-10) 20-10-14, 20-10-25, 20-10-29; Ֆաքս՝ (374-10) 20-12-29
Էլ. փոստ՝ Armenia@savethechildren.org
Վեբ կայք՝ www.savethechildren.net; www.life-disability.am

